ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա. 3 հատորով, կազմեց ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայկական ՍՍՌ Պետգրապալատ, Երևան, հատ. I, 1954, հատ. II, 1956, հատ. III, 1957:

Աշխատությունը, ուր այժմ ունինք մեր առջև, իր մեծադիր ծավալով (3 հատոր, ավելի քան 2000 էջ) և իր ընդգրկած լայն ծրագրով (Հայ պարբերական մամուլը սկիզբեն մինչև մեր օրերը՝ 1794—1956), ուշագրավ է արդարև ու կներկայանա առաջին փորձը իր տեսակին մեջ։ Ասով ալ թերևս արդարանան մեր հետաքրքրությունն ու կանխակալ ակնածանքը աշխատության մը հանդեպ, որ, հեղինակին իսկ հայտարարությամբ՝ տասնյակ տարիներու որպես արդասիք կներկայանար մեզի։ Իսկան էր, սակայն, թե ի՞նչ դրական արդյունք պիտի ստանայինք, թափանցելով աշխատության ներքին ծալքերուն, ուրիշ խոսքով՝ կշիռքի դարնելով արժեքը խոստումին և անոր գործադրության։ Փորձենք։

I հատորով հեղինակը տված է հայ պարբերական մամուլի ծագումն ու զարգացման ընթացքը՝ 1794-են մինչև 1909 թվականը։ Նկատի ունեցած է 272 հրատարակություններ։ II հատորով ներկայացված են 1900-են մինչև 1956-ի վերջավորությունը լույս տեսած պարբերականներ, 1174 անուն, իսկ III հատորը նվիրված է հայ բոլշևիկյան մամուլին (1902—1920) և սովետահայ մամուլին (1920—1954), 390 անուն։ Ընդամենը նկատի առնված են 1836 հայերեն և 45 օտար լեզվով պարբերական հրատարակություններ։ Այս թիվերը, ավելորդ է ըսել, թե չափազանց պակասավոր են։

Հատորներեն յուրաքանչյուրն ունի նյութի դասավորումներ հետևյալ ձևով. 1. Առաջաբան. 2. Հայ պարբերական մամուլը (բուն նյութը՝ ժամանակագրական կարգով։ Աշխատության մայր երակն է). 3. Այբբենական անվանացանկ հեղինակների, թարգմանիչների և դրախոսողների. 4. Բովանդակություն (ցանկ հայ պարբերական մամուլի, այբբենական կարգով)։ Ինձ կթվի, սակայն, թե կարելի էր ասոնց վրա ավելցնել ուրիշներ ևս, ոչ նվազ էական, որոնցմե գործը պիտի օգտվեր, ինչպես՝ 5. Հայ պարբերական մամուլը ըստ հրատարակության վայրերու. 6. Այբբենական անվանացանկ խմբագիրներու և հրատարակիչներու. 7. Ցանկ տպարաններու, ուր լույս տեսած են մեր պարբերականները։ Ազյուսակաձև այս փոքր լրացումները, որոնք զգալի չափով պիտի դյուրացնեին ուսումնասեր ընթերցողին պրպտումները այդ մարզին մեջ, մեծ աշխատանքի մը պիտի չկարոտեին կկարծեմ։

Մատենագիտության նպատակն է տալ ընտրված նյութի, ներկա պարագային՝ մամուլի, արտադրության ամբողջական և սիստեմատիկ դասակարգումը, ի սպաս մասնագիտական ուսումնասիրության։ Գրախոսվող աշխատությունը լիովին իր նպատակին ծառայած պիտի ըլլար, եթե անոր հարգո հեղինակը հայտնաբերած ըլլար ավելի ջանադրություն և բծախնդիր վերաբերմունք։ Այդպիսով վերացված պիտի ըլլային գեթ որոշ չափով այն թերիներն ու աղավաղումները, որոնք, դժբախտաբար, կան աշխատության մեջ։

Որպես հիմնական թերիներ, առաջին իսկ ակնարկով նկատելի են աշխատանքի հետևողական դրության պակասն ու կամայական զումները փաստական նյութերուն։ Հակառակ տրված հավաստումներուն (Ա հատոր, Առաջաբան, VII), հարկ եղած կարևորություն չ՝ ընծայված մատենագիտական (բիբլիոգրաֆիկ) կարգ մը տարրական սկզբունքներու պահպանման։ Քիչ չէ թիվը այն պարբերականներուն, որոնց պակսած են մատենագիտական էական ծանոթություններ և հրատարակչական ցուցանիշներ։ Չեն հիշատակված յուրաքանչյուր պարբերականի զարգացման ընթացքը, խմբագրական, բովանդակության (հետևած ուղղության), ծավալի և տպագրական տեսակետներե ինչպիսի փուլերե անցած և ինչ փոփոխություններու ենթարկված ըլլալը։ Այսպես, նշանակելով պարբերականի մը հրատարակության տարին, չէ ըսված, թե ան քանի՞ թիվ է լույս տեսած (անշուշտ՝ երբ հնարավոր է), ե՞րբ սկսած և քանի՞երորդ թիվեն դադրած։

Անբացատրելի կմնա նյութերու ցանկավորման հանդեպ ստեպ կիրարկված սահմանափակումը։ Հեղինակը, ջանալով արդարացնել այս բացը, կրսե. «Մենք չենք ավել լրագրերի հոդվածների նկարագրություններ, որովհետև տասնյակ հատորներ կպահանջեր» (Ա հատոր, Առաջաբան, VIII)։ Կասկած չկա, թե տեղի խնայողություններ չի կրնար խնդրո առարկա ըլլալ մատենագիտության մեջ։ Բիբլիոգրաֆիկ ընդհանուր բնույթի գործեր մշտական հրատարակվող երկասիրություններ չեն։ Պարբերական մամուլին, հատկապես լրագրության մեջ են ցրված վերջին ավելի քան մեկուկես դարու մեր մտավոր և հասարակական կյանքը պատկերող գրություններեն շատեր։ Հայ բիբլիոգրաֆին վրա պարտ կծանրանա առավելապես այդ թերթերու մոռցված այունակներեն տարիներու ընթացքին կորսվելու դատապարտված նյութերը լույսին բերելու շնորհակալ աշխատանքը, մանավանդ, երբ նկատի ունենանք, թե այդ «իրավագրկված»-ներուն մեջ կան «Մշակ»-ի, «Նոր Դար»-ի, «Արևելք»-ի, «Հայրենիք»-ը, «Բյուզանդիոն»-ի և այլոց նման հրատարակություններ, որոնք նշանակալից դեր են խաղացեր մեր գրականության զարգացման և աճի գործին մեջ։

Սակայն լրագրական հոդվածներու նկարագրությունը չէ միայն, որ անտեսված է գրախոսվող աշխատության մեջ։ Հոն չեն հիշատակված նյութերը նաև մեր շատ մը պարբերականներու և տարեգրքերու։ Առնենք, օրինակ, Կ. Պոլսո Ազգ. հիվանդանոցի «Տարեցույցները»։ Ասոնք մեր գրական հայտնի դեմքերեն դոկտ. Ն. Տաղավարյանի, Հրանտ Ասատուրի, Դ. Խաչկոնցի, Մ. Օրմանյանի, Ա. Աթոյանցյանի, Թ. Ազատյանի և այլոց խմբագրությամբ՝ 26 տարիներ լույս տեսած, ունեցած են փայլուն շրջաններ, որոնց մասին ոչ իսկ դույզն ակնարկություն կա։ Նույն զանցառումը նկատելի է «Տաթև», «Ժողովրդական», «Հայուն», «Հայկաշեն», «Ֆրանսահայ», «Կյանք և արվեստ», «Եգիպտահայ», «Ասորիահայ», «Ամերիկահայ» «Ամենուն նոր», «Բժշկական» և այլ տարեցույցներու, ինչպես նաև «Քննասեր», «Շանթ», «Ծիածան», «Ասրուշան», «Նավասարդ», «Կյանք և արվեստ» և այլ պարբերական հրատարակություններու վերաբերմամբ։ Բիբլիոգրաֆիկ տեսակետով զգալի թերիներն գերծ չեն նաև նկարագրությունները սովետահայ պարբերականներեն «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրքի (Գ հատ. 497), որուն ոչ բովանդակությունը և ոչ ալ խմբագրական կազմն (Զարենց, Բակունց, Զուրաբ) են հիշված, «Հայաստանի» (Գ. 483), «Արշավի», «Վրաստանի սովետահայ գրողների» (Գ. 497), «Գրական թերթի» (Գ. 112), «Պրոլետարի գրական հավելվածի» (Գ. 484) և այլն։

Լրիվ պահպանված չէ նաև ժամանակագրական կարգը։ Պարբերականները դասավորված են նախապես ըստ տարիներու, ապա տարեթիվերու ներքև վերածված են այբբենական կարգի, ինչ որ տեղի ված է որոշ վերիվայրումներու։ Այս պարագան նկատելի է մասնավորապես այն թերթերու մոտ, որոնք ժամանակի ընթացքին մեկեն ավելի անվանափոխություններու ենթարկված են և կամ իրենց դադարումով ծնունդ ված են ուրիշներու։

Մատենագիտական աշխատություն մը լիարժեք և վստահելի կդառնա, երբ տրված տեղեկություններն ու նյութերու նկարագրականը բաղված ըլլան de visu. ուղղակի սկզբնաղբյուրներեն, ա՛յն թերթեն կամ գրքեն, որու մասին կխոսվի։ Մեր իրականության մեջ, ի մասնավորի մամուլի վերաբերմամբ, այդ բանը դժվար իրականանալի համարված է, նկատի ունենալով հայերեն հրատարակությանց տարապայմանորեն ցրված վիճակը աշխարհի չորս դին, իսկ մեկ մասն ալ հազվագյուտ բիբլիոգրաֆիկ միավորներ են այսօր։ Գրախոսվող աշխատության հեղինակը կրնա ինքզինքը բախտավորներեն նկատել, որ ունեցած է իր տրամադրության տակ Հայաստանի և Սովետական Միության հարուստ գրադարաններն ու հնարավորություն՝ օգտվելու անոնց մեջ պահպանվող հայ պարբերական մամուլի ամենաճոխ հավաքածոներեն։ Այդպիսի պայմաններու մեջ տարված աշխատանք մը պիտի խոստանար հնարավորին չափ կատարելատիպ գործ մը ներկայացնել մեզի։ Յավ ի սիրտ, հեղինակը չէ հաջողած լրիվ արժեքավորել այդ բոլորը, չէ կրցած լավագույնս օգտվիլ իր ձեռքին տակ ունեցած ապրյուրներեն և այլ բազմաթիվ կարելություններեն։ Բիբլիոգրաֆիայի մը առհասարակ թույլատրված չէ ոչ իսկ տպագրական վրիպակներ ունենալ, մինչ հոս մենք ականատեսն ենք գիտական և տեխնիկական բազմաթիվ անճշտություններու, փաստական նյութերու աղավաղումներու, շփոթությանց, բացթողումներու և խեղաթյուրումներու։

Փափագելով ավելի առարկայական ըլլալ դիտողություններուս մեջ ու նաև որոշ չափով դյուրացնելու համար նյութի հետագա վերամշակման որևէ աշխատանք այդ ուղղությամբ, պիտի փորձեմ հոս անցողակի կանգ առնել մեկ բանի մասնանշումներու վրա, տալով անհրաժեշտ ճշտումներն ու լրացումները։ Ասոնցմով կհուսամ համեստ նպաստս բերած

բլալ աշխարհի չորս կողմերը ցրված մեր մասուի համագրումի և ցանկավորումի գործին։

Ա. հատոր, էջ 24. Լրո գիր մեծի տերությանց Սամանյան, Կ. Պոլիս... 1832—1850։ Հարկ է ճշտել ու մանրամասնել. Պոլսահայ առաջին թերթ։ Ֆրանսայի լրագրող Ալեքսանդր Բլաբի խմբագրությամբ լույս տեսնող «Moniteur Ottoman» պաշտոնաթերթին հետևողությամբ հրատարակվող թուրքերեն «Թագվիմի Վաղայի» թերթին հայերեն հրատարակությունն է եղած, որ սկսած է լույս տեսնել նույնին 12-րդ թիվն ապին, 13/26 հունվար 1832-են մինչև 1833 թ.։ 1840—1841-ին նույնը լույս տեսած է «Թագվիմի Վաղայի» անվան տակ, հայատառ թուրքերեն, որուն միջոց մը խմբագիրն է եղած Պոլսո Հայոց պատրիարքարանի թուրքերենի դիվանագիր Գեորգ Գրիգորյանը։ Երկու տարվան դադարե հետո, 1843-ին հրապարակ եկած է «Ճերիտեի հավատիս» անունով, նույնպես հայատառ թուրքերեն։ 1846-ի օգոստոսին վերակոչված՝ «Հայտարար գիր լրո մեծի տերության» անունով, զուտ հայերեն, և շարունակված լույս տեսնել «Սուրհանդակ բյուգանդյաց» անվան տակ, ավելի հայացված, մինչև 1850 թ.։ Տպագրություն Աբրունի տպարանի (Մաթպատի Ամիրե), որու վարիչներն են եղած հաջորդաբար Պողոս Արապյան Ապուշեխցին և Հովհաննես Մյուհենթիյան։

Ա. 136. Բաներ պատրիզական, Պարտիզակ, 1848... Ճշտել. «Բանրեր պարտիզակյան», Պարզեհիկ (Պարտիզակ)։ Հրատարակիչ Հովհ. Սարեն Մկրյան (ապա՝ Հովհ. ա. բ.)։ Ձեռագիր, շարաթաթերթ։ 1847, լույս տեսած է 6 թվի չափ։ Միանգամայն (երկու էջ)։

Ա. 265. Միություն, Հանգես Հաշտենից, Զմյուռնիա, 1860... Ճշտել. սույն թերթը՝ 3 ամսվան դադարե մը հետո վերսկսած է իր հրատարակությունը 1861 սեպտ. 1-ին և շարունակված մինչև 1862-ի վերջերը։ Մասնավոր խմբագիր չի ունեցած։ Հաշտենից Ընկերության անունով վարած են թերթը և աշխատակցած անոր՝ Սարգիս Միրզա Վանանդեցի, Տ. Հ. Թ. Սավալանյան, Մատթեոս Մամուրյան և Գալ. Կոստանդյան։ Լույս տեսած է 19 թվի չափ։

Ա. 267. Աեր. տասնօրյա, Կ. Պոլիս, 1860—1864։ Ճշտել. սկիզբը եկած է կիսամսյա. Ը տարին՝ շաբաթաթերթ, աշխատակցությամբ Ա. Մ. Գարագաշյանի։ Գ տարին (1863)՝ կիսաշաբաթաթերթ՝ «Մտերիմ ժողովրդյան» ենթախորագրով։ Դ տարին՝ տասնօրյա։ Դադրած նույն 1864-ի վերջը։ 1870-ի ապրիլին վերահրատարակված է որպես երկօրյա, ամսվան մը չափ, Օգսեն Խոճասարյանի խմբագրած «Օրագիրին» փոխարեն, 12 թվի։

Ա. 270. Մաղիկ..., Զմյուռնիա, 1861—1907։ Ճշտել. լույս տեսած է 1861—1867 թվականներուն, դադրած՝ 1867 նոյեմբերին՝ վերջնականապես։ Վերջին տարին տպված Կ. Պոլիս, Սրամյան-Արևելյան և Ռ. Հ. Քյուրքճյան տպարաններուն մեջ։

Ա. 304. Սիոն..., Երուսաղեմ, 1866—77. Նոր շրջան 1927—30։ Ճշտել. լույս տեսած 1930-են ալ ապին. կշարունակվի ցարդ։

Ա. 470. Ընդարձակ տարեցույց Ս. Փրկչի Ազգ. հիվանդանոցի. Կ. Պոլիս, 1883—1930։ Ճշտել. «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչի Ազգ. հիվանդանոցի» Ա—Ժ տարի, 1900—1910 և 1924։ Նոր շրջան՝ 1925-ին՝ կոչված «Ընդարձակ տարեցույց...», 1925—1948։

Ա. 483. Հայն, շաբաթաթերթ, Վառնա, 1884—1886։ Ճշտել. Հայն, Sapathagan Lura-Qir Kahakagan, Asqain, Gronagan iev Usumnagan, Organ Haï qahtaganuthiantz i Europa, Haieren iev fransieren. Responsable G. Gasparian, Redacteur A. J. Joannesian.

Ա. 488. Եվա..., Կ. Պոլիս, 1886—1887, հրատ. Մ. Գալենտեր։ Ճշտել. անտեղի է իր տիշատակությունը պարբերականներու կարգին։ Իգական սեռի հատուկ ձեռագիրության ուսեցույց-գասընթաց մըն է, գրքի ձևով լույս տեսած՝ այլեայլ թվականներու։

Ա. 488. Իրավունք, Վառնա, 1885։ Ճշտել. կիրատարակվի չորեքշաբթի և շաբաթ օրերը, հայերեն և ֆրանսերեն (հրատ.)։ Խմբագրական մասնաժողով Իրավունք լրագրոյ Հայրենասիրաց ընկերության ի Վառնա։ Պատ. խմբագիր Թագվոր Փափազյան. 1885, լույս տեսած է 21 թիվ, 4 էջ, վերջին էջը՝ ֆրանսերեն։

Ա. 605. Արտերա, տունդարերեն ամսագիր, Կերլա, 1887—1889։ Ճշտել. նույն թերթը՝ որպես տարբեր հրատարակություն, հիշված է նաև Բ հատորին մեջ (էջ 20) Armenia, Szamosujvar, 1901։ Այս երկու հիշատակությունները ալ միևնույն պարբերականին կպատկանին։ Կերլա և Szamosujvar միևնույն քաղաքն են, նախկին Հայաքաղաքը (Armenopolis)։ Լույս տեսած է 1887—1907 տարիներու ընթացքին, դադրած 1907-ին՝ խմբագրին Kristor Szongot (գոկտ. Խաչիկ Սոնկոթյանի) մահեն քիչ հետո։ Հ. Մ. Պոտուրյան, ուզելով կյանքի վերակոչել այս պարբերականը, 1912-ին նույնին ասի մեկ բացառիկ թիվը լույս ընծայած է հունգար լեզվով։

Ա. 560. Արեգակ, շաբաթաթերթ, Վենա Հոպորն, 1888, խմբ. Հ. Էկինյան, և Ա. 615. Ամատուրյուն, լրագիր, Նյու-Յորք, 1890—1892, խմբ. Հ. Էկինյան։ Ճշտել. այս երկու թերթերը լույս տեսած են նույն խմբագրության

տակ, որպես իրարու հաջորդող հրատարակություններ։ Ասոնցմէ «Արեգակը» լույս տեսած է 1—13 թիվ, որու գաղարումեն հետո 1889-ին հրապարակ ելած է «Մուրհանդակ» անունով և տեսած՝ 1—25 թիվ։ Կարճատև դադարէ հետո շարունակված է «Ազատություն» անվան տակ, 1890—1892 տարիներուն, 26—59 թիվ։ Բոլորն ալ Հ. Էկինյանի խմբագրության տակ, հայերեն և անգլերեն։

Ա. 669. Երավունք, Վառնա... 1896—1900։ Ոչտել. լույս տեսած է 1896—1911 տարիներու ընթացքին, նախապես որպես կիսաշաբաթաթերթ, 1909—1911-ի ընթացքին՝ որպես շաբաթաթերթ։ Տեր և հրատարակիչ Հակոբ Կուրպեթյան։ Ճիշտ չէ թե հրատարակվեր են նաև ֆրանսերեն հոդվածներ։

Ա. 674. Հայելի.... Վառնա, 1897—1903։ Ոչտել. լույս տեսած է Վառնայի մեջ 1897 ապրիլեն մինչև 1902 օգոստոսի վերջը, 1—260 թիվ։ Խմբագիր Տ. Փափազյանի Եպիսկոպոս փոխադրվելովը՝ Աղեքսանդրիայի մեջ թերթը լույս տեսած է տարիի մը չափ, 1903—1904 թվականներուն, 261—304 թիվ։

Բ. հատոր, էջ 12. Վենետիկ.... Վենետիկ, 1901—1906, 1909, 1927։ Ոչտել. ունեցած է նաև հաջորդական հրատարակություններ. 1947-ին՝ նվիրված «Բազմավեպի» հարյուրամյակին (1843—1943), և 1949-ին՝ ի հիշատակ Մխիթար արքահոր մահվան Բ դարադարձին (1749—1949)։

Բ. 20. Հանդես հայագիտության. Zeitschrift fur Arm. Philologie. Ոչտել. լույս տեսած են երկու պարբերագրեր, 1903 և 1904 տարիներու ընթացքին, VIII+352 և 320 էջերէ բաղկացած։ Marburg-ի մեջ։

Բ. 37. Դիտություն. ամսաթերթ, Լոզան, 1904։ Ոչտել. լույս տեսած է մինչև 1909 թվականը, անկանոն կերպով։ Ա. տարին՝ Հայկազյան տպարան, Լոզան, Բ տարին (1908—1909)՝ Փարիզ, Ներսեսյան տպարան։

Բ. 39. Արզուվանդ. կիսաշաբաթաթերթ, Վառնա-Ռուշչուկ, 1905, 1—17։ Շարունակություն «Հայաթերթի»։ Ոչտել. տարակուսելի է այս անունով թերթի մը գոյությունը։ Նույնին հիշատակություններ բրած էր ասկն առաջ նաև Գ. Լևոնյան (Հայոց պարբ. մամուլը, 1934, էջ 43, թ. 323), վստահաբեն օգտվելով Հ. Ռ. Կարապետյանի մեկ սխալագրությունեն (Հ. Ռ. Կարապետյան, Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու..., Վիեննա, 1924, էջ 40, թ. 461)։ Արդ, որքան ինձ ծանոթ է, այդ անունով ոեվ հրատարակություն չի՛ գտնվիր ոչ Վիեննայի Մխիթարյանց դրապահոցին մեջ և ոչ այլուր։ Ըստ իս, այդ անճշտությունը ծնունդ առած է դպրած «Հայաթերթի» թռուցիկ մեկ հայտարարությենեն, ուր կծանուցվի ի մասն հրատարակվելիք «Արգավանդ» թերթի մասին (Հավելված «Հայաթերթի», Վառնա, թ. 124, 1904 նոյ. 13)։ Ըստ իս, «Արգավանդ» անունով թերթ լույս չէ տեսած։ Ի դեպ, ասկն առաջ ալ, նման թռուցիկ հայտարարության մը և թյուր տեղեկություններու զոհ երթալով, մեր մամուլի անցյալով զբաղող հեղինակներ (Լեո, Հ. Ռ. Կարապետյան, Գ. Լևոնյան) հիշած էին ռումանահայոց մեջ «Արոր» անվամբ շաբաթաթերթի մը հրատարակված ըլլալը 1892—1894 թվականներուն։ Հայտնի է, թե այդ հիշատակության անճշտություններ հերքվեցավ մեզմե առաջին, «Արորի» լույս տեսած չըլլալու փաստով։ («Բազմավեպ», 1937, էջ 203)։

Բ. 39. Ասպարեզ. թերթ, Փարիզ, 1905—1908—1920 (Ֆրեզնո)... Ոչտել. «Ասպարեզ», հանդես կիսամսյա, տնտեսական, վաճառականական, գրական և ընկերաբանական. նույնը ֆրանսերեն՝ Asparez, Revue mensuelle commerciale, economique, litteraire et sociologique, Publiee sous le patronage du Syndicat National de la Presse.... de France. Լույս տեսած է 1905-ին՝ թ. 1—2, 1909-ին՝ թ. 1 և 1910-ին՝ թ. 1։ Այսքան։ 1920-ին լույս չէ տեսած և ոչ մեկ կապ ունի Ֆրեզնոյի նույնանուն թերթին հետ։

Բ. 56. Բազմիկ..., Թիֆլիս, 1905—1909։ Եղել է երկօրյա, ապա օրաթերթ։ Ոչտել. լույս տեսած է 1905—1908 թվականներուն, որպես կիսաշաբաթաթերթ։ Օրաթերթ երբեք չէ եղած։

Բ. 87. Ամենուն տարեցույցը..., Կ. Պոլիս 1907—1920, Վենետիկ՝ 1921—1926, Փարիզ 1927—1928, Կ. Պոլիս՝ 1929։ Ոչտել. լույս տեսած են՝ 1907—1923՝ Կ. Պոլիս, 1924—1925՝ Վիեննա, Մխիթարյան տպագր., 1926՝ Վենետիկ, տպ. Մխիթարյանց, 1927—1929՝ Փարիզ, տպ. Մասիս։ Վերջինը (1929) Թեոդիկի հանկարծական մահվը՝ կեսեն ասդին շարունակված է Նշ. Պեշիկթաշլյանեն, Թեոդիկի նյութերով։ Նյութերու նկարագրության մեջ կպակսի 1925 տարիինը, կան նաև մեկ քանի անճշտություններ։ 1926-ի հատորին մեջ (էջ 24—169) «Որթն ու իր բերքը» այգեբանական և մատենագրական ուսումնասիրության հեղինակը Հ. Տանձիկյանը չէ, այլ Թեոդիկը։ Նույն շփոթությունը կրկնված է նաև 1927-ի հատորին մեջ (էջ 120—124), հիշյալ ուսումնասիրության հավելվածական մասին առթիվ, որ չես գիտեր ինչպես, նույն Հ. Տանձիկյանի վերագրվեր է։ Ավելի ուշադիր վերաբերմունք մը

պիտի պարզեր, թե Հ. Տանձիկյանի կպատկանի միայն քիչ անգին լույս տեսած «Մրգաստաններ ներս» գրական հոդվածը (էջ 133—142), որ և շարունակված է 1928-ի հատորին մեջ։

Բ. 103. Արշալույս, ամենօրյա լրագիր, Զմյուռնիա, 1907—1908, Բ. 119. Արձագանք, ամսօրյա լրագիր, Զմյուռնիա, 1908 և Բ. 119. Արշալույս, օրաթերթ, Զմյուռնիա, 1908։ Այս երեք անունները հարկ է միացնել, ընելով հետևյալ լրացումները, «Արշալույս», օրաթերթ. 1907, հրատարակիչ Բարսեղ Քեշիշյան։ Լույս տեսած է 146 թիվ։ 1908-ին, Սահմանադրության հռչակումով, անունը փոխված է «Արձագանք»-ի, որ լույս տեսած է Վահան Թոռիկյանի և Հայկանուշ Սառքի խմբագրությամբ։ Այս թերթը 172 թիվ ելլելե հետո վերակոչված է «Արշալույս»։ Լույս տեսած է 1—285 թիվ։

Բ. 129. Ժամանակ, օրաթերթ, Կ. Պոլիս, 1908—1919, 1922—1930, հետագայում հրատարակվել է Գալացում։ Ճշտել. «Ժամանակ» շարունակած է լույս տեսնել երկար տարիներ, կշարունակվի նաև ներկայիս։ Գալացի մեջ չէ հրատարակված։

Բ. 160. Խարազան, երգիծաթերթ (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1909—1910... Ճշտել. նույն անունով լույս տեսած են միաժամանակ երկու համասեռ հրատարակություններ, նույն արտոնատիրոջ անունով։ 1. «Խարազան», պատկերազարդ շաբաթաթերթ, խմբագիր Արամ Անտոնյան։ Ա տարի, թ. 1—10. (7 փետր. 1909—22 ապրիլ 1909). 2. «Խարազան» երգիծական օրաթերթ. կհրատարակվի ամեն օր արշալույսին։ Խմբագիր Երվանդ Օտյան։ Ա տարի. թ. 1—10. (11 մարտ—27 մարտ 1909)։

Բ. 166. Տանար..., Կ. Պոլիս, 1909—1915։ Ճշտել. լույս տեսած է նաև հաջորդ տարիներուն, առաջին աշխարհամարտի տևողության, որպես շաբաթաթերթ։ Արտոնատեր Հմ. ա. ք. Լբսերճյան, պատ. տնօրեն Հրանդ ծ. վ. Հովսեփյան։ Նոր շրջան, 1916 հոկտեմբերեն մինչև 1918։ Լույս տեսած է նույն թվականներուն նաև նույնին ֆրանսերեն հրատարակությունը (Բ. 315)։

Բ. 195. The Armenian, Calcutta, 1910. Ճշտել. լույս տեսած է 1908 տարիեն սկսյալ. լրիվը է՝ The Armenian (Published Forthnightly), Calcutta, vol. I—IV. 1908—1910.

Բ. 203. Գավառային տարեցույց. Կ. Պոլիս, 1911—1914, Բ. 215. Հայրենի տարեցույց, Կ. Պոլիս, 1911—1912, Բ. 271. Հայուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1914։

Երեք տարբեր անուններով լույս տեսած այս հատորները արևմտահայ գրող Սահակ Մեսրոպի կազմած տարեցույցի տարվե-տարի կրած անվանափոխություններն են պարզապես։ Հ. Պետրոսյան կրկնած է Գ. Լևոնյանի սխալը, առանց անդրադառնալու մեր ճշտումին։ Կկրկնեմ ճշտումս.

1. «Գավառին տարեցույցը», Ա տարի, 1911, Կ. Պոլիս։

2. «Հայրենի տարեցույց», Բ, տարի, 1912, Կ. Պոլիս։

3. «Հայուն տարեցույցը». Հայկական վերածնունդ, Գ տարի, 1918, Կ. Պոլիս։

4. «Հայուն տարեցույցը» Դ տարի, 1914, Կ. Պոլիս։

Բ. 218. Շանթ..., Կ. Պոլիս, 1911—1919։ Բոլորովին աննկատ ձգելով այս պարբերականին հրատարակության իսկական տարեշրջանները, հեղինակը հոս (ինչպես նաև մեկ քանի ուրիշ հրատարակություններու) յուրահատուկ նոր և անհամապատասխան դասավորում մը տված է լույս տեսած համարներուն

1911	թ. 1—13
1912	թ. 14—33
1913	թ. 34—51
1914	թ. 52—53
1919	թ. 21—35

Մինչ մատենագիտական պատշաճությունը պիտի թելադրեր առնվազն հավատարիմ մնալ խմբագիր-հրատարակչին տարեթիվներուն։ Հարկ է ճշտել այսպես.

Ա տարի (կիսամսյա), թ. 1—24. 15/28 հնս. 1911—1/14 հնս. 1912։

Բ տարի (կիսամսյա), թ. 25—48, 1/14 հլս. 1912—12/25 հկտ. 1913։

Գ տարի (կիսամսյա), թ. 49—60 ...նոյ. 1913—ապր. 1914։

Դ տարի, Նոր շրջան (շաբաթաթերթ), թ. 1—36, 16 նոյ. 1918—19 հլս. 1919։

Բ. 226. Ոստան, եռամսյա..., Կ. Պոլիս, 1911—1912 և 1919—1920։ Պատ. տնօրեն Միր. Շամտանճյան և Տիգր. Զյոկյուրյան։ Ճշտել. երկրորդ շրջանին՝ 1919—1920-ին, «Ոստան» լույս տեսած է որպես ամսագիր, խմբագիր-հրատարակիչ ունենալով Միր. Շամտանճյանն առանձին։ Ինչպե՞ս կրնար 1919—1920 շրջանի հրատարակիչներեն մեկն ըլլալ Տ. Զյոկյուրյան, որ զոհվել էր 1915 թվի ապրիլյան մեծ եղեռնին։ Այսքանով չի վերջանար սակայն։ Հեղինակը այս պարբերականին կից տված է նաև կենսագրականները Միպիլի, Հակոբ Օշականի և Եղիա Տեմիրճիպաշյանի, գուցե առանց անդրադառնալու, որ անոնք ոչ մեկ կապ են ունեցած պարբերագրին խմբագրական կամ հրատարակչական աշխատանքներուն հետ։ Հի-

շեցնենք այն փաստը թե Ե. Տեմիրճիպաշյան «Ոստանի» երևումն երեք տարի առաջ (1908 հուլիսի 6-ին) մահացած էր արդեն։

Բ. 234. Ռահվիրա, օրաթերթ, Կ. Պոլիս, 1911—1912։ Ճշտել. հրատարակված է 1912 թվին, 19 փետրվարեն մինչև 7 մայիս, միայն 16 թիվ, փոխան «Բյուզանդիոնի»։ Տեր և տնօրեն Արշակ Ալպոյաճյան։

Բ. 246. Միություն. ամենօրյա պաշտոնաթերթ Հայկ. բարեգ. ընդհ. միության, Կահիրե, 1912—1928, Փարիզ, 1919—1930։ Ճշտել. ամսօրյա պաշտոնաթերթ։ Համաշխարհային II պատերազմի ժամանակ՝ Միության կենդրոնին Ամերիկա փոխադրության հետևանքով, միացված է Ամերիկայի Շրջանի օրգան «Հուշարարի»։ Ցարդ կշարունակվի։

Բ. 251. Փեթակ. ամսաթերթ. Կ. Պոլիս, 1912—1914։ Լրացնել. ամսօրյա պատկերազարդ հանդես, դպրոցներու համար։ Հրատարակություն Նիկողոսյան աղջկանց բարձրագույն վարժարանի, Կ. Պոլիս։ Արտոնատեր և պատասխանատու տնօրեն Հ. Գ. Նիկողոսյան։ 24 էջ։

Բ. Շուշան..., շաբաթաթերթ. Կ. Պոլիս, 1913։ Լրացնել. խմբագիր Զարեհ Նեմցե. պատասխանատու Ս. Եղիկյան, արտոնատեր Գ. Թաշեճյան, 1913, թթ. 1—10։ 32 էջ։

Բ. 283. Պալքանյան մամուլ... Ռուսչուկ-Սոֆիա, 1915—1922։ Ճշտել. վերահրատարակված է 1931 թվականից որպես շաբաթաթերթ։ Նոր շրջան, տեսած է մինչև 1943-ի վերջը, Սոֆիայի մեջ։

Բ. 320. Գրպանի տարեցույց, կազմեց Սիմեոն Գարամաճյան, Փարիզ. 1919—1935. և Բ. 336. Գրպանի տարեցույց, Կ. Պոլիս, 1920—1937։ Ճշտել. նույն հրատարակությունն է՝ երկու տեղ հիշված որպես տարբեր հրատարակություններ։ Լույս տեսած է Կ. Պոլիս՝ 1919—1932, Փարիզ՝ 1933—1938։ Խմբագիր Սիմոն Գափամաճյան։ Փոքրագիր, վերջինը՝ 128 էջ։

Բ. 324. Հայ կին..., Կ. Պոլիս, 1919—1925։ Ճշտել. 1919—1932 տարիներուն։

Բ. 333. Պալքանյան մամուլ, զավեշտաթերթ, Սոֆիա, 1919։ Ճշտել. «Մայմուն» (երգիծաթերթ)։

Բ. 354. Լուսաբաշակ..., շաբաթաթերթ, Վառնա, 1920—1921։ Ճշտել. պարբերական հրատարակություն Հայ ռամկավար կուսակցության, Վառնա։ Նախ շաբաթաթերթ, ապա կիսամսյա, ավելի հետո՝ ամսաթերթ։ Արտոնատեր Սիմոն Պենլյան, խմբագիր Տիգրան Մարտիրոսյան։ Որոշ ընդհատումներով լույս տեսած է 1 մայիսի 1920-են մինչև 13 նոյ. 1931։

Բ. 368. Ակաուտ..., Կ. Պոլիս, 1921—192[illegible] խմբագիր Ուղուրլյան։ Սա սխալ մեկ կրկնությունն է «Հայ սկաուտ» պարբերականին (Բ. 329)։ Խմբագիր Կարո Ուշաքլյան։

Բ. 379. Առավոտ..., հրատ. Թյուրք և Հայ միության, Կ. Պոլիս, 1922—1925։ Ճշտել. լույս տեսած է 1924-ին, 6 թիվ միայն։

Բ. 379. Նոր Արշալույս..., Բուխարեստ, 1922—1923։ Ճշտել. լույս տեսած է ավելի քան տասնյակ տարիներ. ինձ ծանոթ է մինչև 1934 տարին։ Վերջին տարիներուն խմբագիրն էր Վարդան Մեշտուճյան։

Բ. 380. Վաստակ, պարբերաթերթ առևտրական, Կ. Պոլիս, 1922, 8 էջ։ Տարիի շփոթություն չկա՞ հոս արդյոք։ Նույն անունով և տարվայներով «Վաստակ» շաբաթաթերթ մը եղած է 1931—1932 տարիներուն Կ. Պոլսո մեջ։ Արտոնատեր և պատասխանատու տնօրեն Արտաշես Գալփաքճյան, տպագր. Կյութեմպերկ. Կ. Ն. Մազասճյան. 16 էջ։ Ասկե հասած է ինձ մինչև Բ տարիին թիվ 38-ը (5 մայիս 1932)։

Բ. 381. Հայ սիրտ, շաբաթաթերթ, Ֆիլատելֆիա, 1923—1927։ Լույս տեսած է նաև հաջորդ տարիներուն. Ինձ ծանոթ է 1931 տարին՝ «Հայ սիրտ», անկախ շաբաթաթերթ, խմբագիր Հակոբ Գույումճյան, Ֆիլատելֆիա։

Բ. 391. Ակի. ամսյա տեղեկատու Հ. Բ. Ը. Մ. Ռումանիո շրջանի... 1924։ Ճշտել. Հ. Մ. Ը. Մ. (Հայ մարմնակրթ. ընդհ. միության)։ Հրատարակված է 1924—1926 տարիներուն. 1935-ին վերստին լույս տեսած է որպես Նոր շրջան։

Բ. 392. Կյանք և Երաժշտություն, օրգան Խ. Հ. Կուլտուրայի տան՝ Երաժշտ. սեկտորի, Մոսկվա, 1924։ Այս պարբերականը՝ որպես սովետահայ հրատարակություն՝ հարկ էր տեղ գտած լլլալ Գ հատորին մեջ, սովետահայ պարբերական մամուլի շարքին։ Գրախոսվող աշխատության մեջ անոր մասին մատենագիտական լրիվ ծանոթությանց պակաս ցույց կուտա, թե պարբերականս՝ հակառակ Մոսկվա տպված ըլլալուն՝ մաքելի չէ եղած հեղինակին, ինչպես չէր եղած ասկե առաջ նաև Գար. Լեոնյանին (տե՛ս նույնին «Հայոց պարբերական մամուլի» մասին գրախոսականս, «Բազմավեպ», 1937, էջ 205)։ Ինչպես կերևի, ներկայիս հազվագյուտ հրատարակություն է։ Օգտվելով իմ սեփական մեկ օրինակես, կուտամ մատենագիտական մանրամասնություններ այս հետաքրքիր պարբերականի մասին.— «Կյանք և Երաժշտություն», օրգան Խ. Հ. Կուլտան Երաժշտական սեկտորի, Մոսկվա, № 1, Նոյեմբեր, 1924. (Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք)։ Պատասխանատու խմբագիր Ա. Տոնիկ։ Հրատարակություն Խ. Հ. Կուլտ.

տան երաժշտական սեկտորի, 16 էջ (24×32 սմ). գին 50 կոպ.։ Типография Госиздата ССР Армении. Москва, Армянский пер. № 2. Главлит № 28201, тираж 500. Բովանդակություն.— Ողջույն Հայաստանի խորհրդայնացման չորրորդ տարեդարձին։ Մեր խնդիրները (առաջնորդող), էջ 1։ Օվսաննա Տեր-Գրիգորյան, Մի էջ հայ երաժշտական թերթերի պատմությունից, էջ 2—3։ Օվսաննա Տեր-Գրիգորյան, Ժողովրդական և կուլտուրական երաժշտություն, էջ 3—5։ Պրոֆ. Կ. Սարաջև, Մի քանի խոսք երաժշտական կրթության վերաբերյալ մասնագիտական դպրոցներում, էջ 5—6։ Ա. Տոնիկ, Երաժշտական կրթական գործը մեզանում, էջ 7—10։ Մարտիրոս Մազմանյան, Մասսայական խմբական երգեցողություն, էջ 10—11։ Գ. Բուդաղյան, Սիմֆոնիկ երաժշտության նշանակություններ երիտասարդ երաժիշտների կրթական գործում, էջ 12։ Անտոն Մայիլյան, Ապագա գեղարվեստը և նոր երաժշտությունը, էջ 13—15։ Լ. Օհանջանյան, Պերսիմֆանս, էջ 15—16։ Ս. Գ., Երևանի պետական կոնսերվատորիան, էջ 16։ Հավելված. «Հնչում են օրերը», խմբերգ, երաժշտություն Անտոն Մայիլյանի, խոսք՝ Ե. Չարենցի։ Շապիկը՝ Միրայել Մազմանյանի, գլխավոր գրաշար Համբարձում Վանիկյան։

Բ. 393. Հայ խոսնակ..., Կ. Պոլիս, 1924—1930։ Ճշտել. լույս տեսած է մինչև 1938, որմե հետո դադրած։

Բ. 396. Փարոս..., շաբաթաթերթ, Սոֆիա, ապա Ֆիլիպե, 1924—31։ Ճշտել. «Փարոս» սկսած է հրատարակվիլ 1929-ի մայիս ամիսեն, Սոֆիայի մեջ և տեսած է մինչև 1945-ի վերջը, մեջընդմեջ փոքրիկ ընդհատումներով։ Նախապես շաբաթաթերթ, երրորդ տարիեն կիսաշաբաթաթերթ, ապա կրկին շաբաթաթերթ։ 1932-ենն տեղափոխված է Պլովդիվ։ Խմբագիր Տ. Մարտիրոսյան։

Բ. 397. Բանբեր..., Մարսել, 1925—1932։ Լույս տեսած է ավելի երկար տարիներ. ծանոթ է ինձ մինչև 1946 թ.։

Բ. 398. Երկիր..., Բուխարեստ, 1925։ Շարունակված մինչև 1928-ի վերջերը, որմե հետո դադրած։

Բ. 398. Զանգ..., Սոֆիա, 1925։ Լույս տեսած է 3 դեկտ. 1925—2 հոկտ. 1926, թ. 1—42։ Պատ. խմբագիր Գ. Գույումճյան։ Խմբագիր Հար. Պողոսյան։

Բ. 403. Սոֆիա, շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1925։ Այս թերթը ոչ թե Պոլսո, այլ Սոֆիայի մեջ լույս տեսած է։ Ճակատն է՝ «Սոֆիա», Ազգային և քաղաքական անկախ շաբաթաթերթ, Սոֆիա։ Տեր և տնօրեն Գ. Գույումճյան, խմբագրական քարտուղար Մ. Գոչունյան։ Հայերեն և բուլգարերեն լեզուներով։ 1925. թ. 1—2։

Բ. 403. Տարեցույց..., Հալեպ, 1925—1929։ Ա տարին լույս տեսած է Կ. Պոլսո մեջ, 1925-ին։ Եղած՝ մինչև 1930 թ., 2 տարի, (Հալեպ. տպ. Ակրաբ, էջ 384)։ Խմբագիր Արտավազդ վրդ. (ապա արքեպ.) Այուրմեյան։

Բ. 416. Կեսուր..., Կ. Պոլիս, 1926։ Լույս տեսած է 1926 դեկտ. 16-ենն մինչև 1928 հոկտ. 25։ Խմբագիր Բագարատ Թեյան։

Բ. 420. Նոր սերունդ, պաշտոնաթերթ Հայ մարմնակրթ. ընդհ. միության Հունաստանի շրջ. վարչության, Բեսթանթ-Պիրեա։ Ակներև է հեղինակի շփոթությունը որպես հրատարակման վայր Պիրեա քաղաքին կցելով բեսթանթ բառը, թե՛ ժամանակագրական ցանկին և թե անոր ռուսերեն թարգմանության մեջ։ Սակայն այսքանով չի վերջանար հեղինակին անծանոթ այդ բառին պատմությունը։ Եռեի այբբենական անվանացանկին մեջ (էջ 618) անգամ մը ևս կհայտնվի ան, այս անգամ որպես... թերթի անուն՝ «Նոր սերունդ-բեսթանթ»։ Իրականին մեջ ան ոչ այլ ինչ է, բան պարզապես նամակատան (կապ) մեջ սովորաբար որպես հասցե ցույց տրված պոստ-բեսթանթ Poste Restante։ Սպասարկություններ, ուր կպահպանվին նամակներ և թղթակցություններ, մինչև հասցեատիրոջ անձամբ ներկայանալն ու ստանալը։

Բ. 423. Զանգ, շաբաթաթերթ, Փարիզ, 1927—1934։ Թյուրիմացության մը պետք է վերագրել արտոնատեր Գեորգ Գույումճյանի և խմբագիր Հ. Պողոսյանի անուններու հիշատակությունը վերևի ծանոթության կողքին։ Այդ անունները կվերաբերին ուրիշ «Զանգ» շաբաթաթերթի մը, լույս տեսած Սոֆիայի մեջ (Բ. 398)։

Բ. 426. Հունաց տարեցույց, Աթենք, 1927—1928։ Ճշտել. «Հունահայ տարեգիրք», Աթենք, մատենաշար «Նոր օր»-ի, 1927, էջ 422։ Լույս տեսած է 1927—1930 տարիներուն (այդքանը ինձ ծանոթ է)։

Բ. 431. Երջանիկին տարեցույցը, Կ. Պոլիս, 1928։ Խմբ. Բ. Թեանյան։ Ճշտել. «Երջանիկին տարեգիրքը», խմբագիր Բագարատ Թեյան։ 1928-ենն մինչև այժմ անխափան լույս կտեսնե, գրական բովանդակությամբ։ Վերջին տարիներուն կոչված՝ «Երջանիկ տարեգիրք»։

Բ. 437. Արծիվ, պարբերաթերթ..., Սոֆիա, 1930։ Լույս տեսած է որոշ ընդհատումներով մինչև 1934-ի կեսը։ Ա տարվա թիվ 5-ենն տեղափոխված է Պլովդիվ, խմբագր. կոլեգիա. 8 էջ։

Բ. 447. Վերածնունդ, շարաթաթերթ, Թեհրան, 1930—1952։ Լույս տեսած է 1930—1953 տարիներուն, նախապես որպես շարաթաթերթ, ապա հաջորդաբար՝ եռօրյա, երկօրյա և ի վերջո օրաթերթ։ Ունեցած է իր «Բացառիկներն» ու «Բորբոխ»-ի միացումով (Բ. 336) երկիծական «Բորբոխ»-ի և «Մանկական բորբոխ»-ի բաժինները 1933-են։

Բ. 449. Կյանք և արվեստ, տարեգիրք, Փարիզ, 1931—1936... Հրատարակիչ Մերուժան Պարսամյան։ Լույս տեսած է 1931—1935 տարիներուն որպես տարեգիրք, իսկ 1936—1941 թվականներուն՝ որպես ամսագիր, գրական-գեղարվեստական բովանդակությամբ։ Խմբագիր-հրատարակիչ Մկրտիչ Պարսամյան։

Բ. 454. Պատկեր..., շարաթաթերթ, Ստամբուլ, 1931, խմբ. Ավ. Ալեքսանյան։ Գրական այլևայլ ձևափոխումներու ենթարկվելե հետո, միջոց մը որպես ամսաթերթ հրատարակված է։ 1939-ին անցած է Բագարատ Թեյանի խմբագրության, իսկ 1940-ին «Գրականություն և արվեստ» անունով լույս տեսած որպես գրական-գեղարվեստական ամսագիր։ 1941-են ապին «Պատկեր» շարունակած է իր հրատարակություններ քանի մը տարիներ ևս, որպես ամսաթերթ, աշխատակցությամբ պոլսահայ նոր գրողներու։ Արտոնատեր Երմոգ Գույումճյան, բնդ. հրատարակության տնօրեն Ավետիս Ալեքսանյան։

Բ. 455. Արևելք, գրական հավելված, Կ. Պոլիս, 1932։ Լույս տեսած է թ. 1—20, որպես գրական հավելված «Արևելք» օրաթերթի, 1932։ Արտոնատեր Խորեն Ճամճյան (փաստորեն խմբագիր՝ Թորոս Ազատյան, վերջին թիվին՝ Հովսեփ Քեչիշյան)։

Բ. 458. Պարտեզ..., Պլովդիվ, 1932—1933։ Լույս տեսած է 1932—1938 տարիներուն, որոշ ընդհատումներով։ 1943-ին եկած են 1—3 թիվեր, Սոֆիայի մեջ։

Բ. 458. Ուսումնարան..., Պլովդիվ, 1932—1934։ Լույս տեսած է 1932 հունվարեն մինչև 1943 դեկտեմբեր, կանոնավորապես։

Բ. 460. Արաց, եռօրյա, Բուխարեստ, 1933։ Լույս տեսած է 1932 մայիս 15-են մինչև 1943 (խմբ. Հ. Ա. Սիրունի)։

Բ. 465. Ալեոու, երգիծաթերթ, Սոֆիա... 1933—1937։ Լույս տեսած 1933 հունիս 25-են մինչև 1943 մարտ։ Արտոնատեր Գ. Հալաճյան։

Բ. 471. Հայ մամուլ, շարաթաթերթ, Բուխարեստ, 1934—1937։ Լույս տեսած 1934—1942 տարիներուն։

Բ. 491. Հերև, ամսագիր, Բուխարեստ, 1937։ Հրատարակված է որպես «Ամսօրյա հավելված «Հայ մամուլ»-ի։ Արտոնատեր Հ. Մ. Պոտուրյան, խմբագիր Կ. Պալճյան, վարիչ Ժ. Դաբաղաշյան։ 1937—1938։

Բ. 496. Դրասերի առաջնորդ, Կահիրե, 1938։ Լույս տեսած է մեկական թիվ 1938, 1939, 1941, 1943 և 1949 տարիներուն։ Վերջին թիվ՝ տեսար Ե, 1949, հունվար։ Հրատարակություն Մատավորական սպասարկության դրասենյակի (խմբագիր Արշակ Ալպոյաճյան), 16 էջ։

Բ. 519. Շարժում..., շարաթաթերթ, Բուենոս-Այրես, 1944—1947։ Այս թերթի հրատարակությունը ծանոթ է մեզ 1937 թ., ցարդ կշարունակվի։

Բ. 545. Զարթոնք, օրաթերթ, Բեյրութ, 1947—1957։ Լույս կտեսնե 1937 թ. ի վեր։

Բ. 549. Արփի..., ամսագիր, Թեհրան, 1949։ Լույս տեսած է նաև հաջորդ տարիներուն, մինչև 1956 թվականը ծանոթ է ինձ նույնին հրատարակումը։

Բ. 549. Լույս, քաղաքական շարաթաթերթ, Իսթամպուլ, 1947։ Ճշտել. «Լույս», գրական շարաթաթերթ, 1948—1950։ Արտոնատեր Հակոբ Ավասյան, վարիչ խմբագիր Երվանդ Կոպկյան։

Բ. 557. Ատոասերդ..., Իսթամպուլ, 1954։ Սկսած է լույս տեսնել 1951 ապրիլեն, որպես հայագիտական և մշակութային ամսօրյա հանդես, 24 էջ։ Բ տարիեն ծավալը մեծցած։ Ընդամենը լույս տեսած են 11 թիվ և իր հիմնադիր-խմբագրին՝ Թորոս Ազատյանի մահվամբ 1953-ին դադրած։

Բ. 558. Զվարթնոց, ամսաթերթ... Փարիզ, 1955։ Երեք տեղ հիշատակված է Հ. Բալուլյանի խմբագրած այս «Զվարթնոց»-ներու շարքը (նախապես էջ 439 և 499)։ Տրված տեղեկությունները թերի են և ճշտումի ու լրացումի կարոտ։ Համադրաբար կուտամ ցարդ եղած հրատարակությունները.

1. Պարբերաթերթ, 1929—1931, լույս տեսած են թ. 1—10, մեծադիր 456 էջ։

2. Ամսաթերթ, 1937—1939, օրաթերթի մեծ ծավալով, թ. 1—9։

3. Եռամսյա, 1947—1948, լույս տեսած է 3 թիվ։

4. Ամսաթերթ, նոր շրջան, 1955—1956, մեծադիր 8 էջ։

5. Տարեգիրք, 1937-ին, մեծադիր 224 էջ և 1944-ին, մեծադիր 352 էջ։

Ուշադրավ է, որ դրախոսվող աշխատության մեջ բիչ չէ թիվը այնպիսի պարբերականներու, որոնք մեկեն ավելի անգամներ հիշված են որպես բոլորովին տարբեր հրատարակություններ։ Ըստ երևույթին, հեղինակը իր աշխատությունը երկրորդ վերատպումի ենթարկելու

հնարավորություններ չէ ունեցած։ Պրկնվող այդպիսի պարբերականներեն հիշենք։ «Արևմուտք», Փարիզ, 1859—1865 (Ա հատ. էջ 172 և էջ 256), «Արմենիա» (հունգարերեն), Կերլա (Ա հատ. էջ 505 և Բ հատ. էջ 229), «Հայաստանի Կոչնակ» (Բ. 35 և 359), «Մեր տարեցույցը», (Բ. 164 և 185), «Տարեցույց» և «Ուսանողներու տարեցույց» (Բ. 278 և 279, ճիշտ ձեն է առաջինը), «Ամսօրյա դափնի» և «Դափնի» (Բ. 316 և 320), «Գրպանի տարեցույց» (Բ. 320 և 336), «Հայ սկաուտ...» և «Սկաուտ» (Բ. 329 և 368, ճիշտն է առաջինը), «Արփի» (Բ. 448 և 455) «Մասիս տարեգիրք» (Բ. 450 և 469), «Երիտասարդ հայուհի» (Բ. 456 և 457)։

Պարբերականներեն մեկ մասին կրնկնրանան ծանոթություններ՝ նվիրված մեկ բանի գրական և հրապարակագրական դեմքերուն։ Սա ինքնին գովելի աշխատանք մըն է, որ որոշ չափով պիտի նպաստեր նյութին ավելի հիմնական ծանոթացման։ Եվ սակայն, անոնցմե հաճախ ավելորդ պերճանքի տպավորություն կստանա մարդ, ի տես մատենագիտական թերի և հարեանցի տեղեկություններուն, որ տրված են բուն իսկ քննարկվող պարբերականի մասին։ Պարբերականին հատկացված հազիվ մեկ բանի տողերուն փոխարեն, անդին կենսագրական կամ բնութագրական ծանոթություններու ամբողջ այունակներ և երբեմն էջեր տրամադրված են։ Գեթ այդ բանը փորձվեր մեկմեկ տպագրական ավելի մանր տառերու օգնությամբ, ինչ որ գեղագիտական տեսակետով ալ թելադրելի պիտի բլլար։ Ատկե զատ, տրված այդ կենսագրություններեն շատեր զուրկ չեն թերիներե և անճշտություններե։ Տանք օրինակներ։ Երվանդ Օտյանի կենսագրության մեջ (Բ. 10—11) նույնին վերագրված են գործեր, որոնք իրը չեն։ Մեկե ավելի առիթներով, Օտյանը շփոթված է Երվանդ Սրմաթեշխանյյանի և Միրայել Կյուրճյանի հետ։ Որպես Եր. Օտյանի հեղինակությունները հիշված են այնպիսի պատմվածքներ (ինչպես «Քարիտեզին», «Զուկին փոխարեն», «Գինովին վարձը» ևն.), որոնք ծանոթ են արդեն որպես Երվանդ Սրմաթեշխանյյանի էջերը։ Հեղինակը Օտյանին վերագրած է նաև Պարույր ծածկանունը։ Օտյան չէ գործածած այդպիսի ծածկանուն։ Հայտնի է, թե Պարույր ծածկանունը պատկանած է եգիպտահայ ծանոթ գրող Միրայել Կյուրճյանի։ Օտյանի հեղինակություններուն շարքին հիշված է նաև «Մարտիկ ազա» անունով վեպ մը։ Օտյանն այդ անունով վեպ չունի։ Բացահայտ է, որ հեղինակը զայն շփոթած է Միր. Կյուրճյանի նույնանուն վեպին հետ, լույս տեսած Արփիարյան-Բաշալյանի «Նոր կյանք»-ին մեջ, Լոնտոն, 1898—1899 թվականներուն։

Ուրիշ տեղ մը (Ա 488), «Մադիկի» աշխատակիցներու կարգին շփոթած է Սիպիլն ու Զապել Ասատուրը իրարու հետ, հիշած է որպես երկու տարբեր անձեր։ «Ոստան» պարբերականին կից ոչ-տեղին տրված նույնին կենսագրության մեջ (Բ. 226—7) մոռացության տրված են շատ մը կետեր։ Չեն հիշված Սիպիլի գործերեն «Աղջկան մը սիրտը» վեպը, (որ լույս տեսած է օր. Ալիս ծածկանունով), «Յոլբեր» բանաստեղծությանց հատորը, «Որբուհին», «Պատվավոր ընտանիք» և «Առաքինության մրցանակ» թատերախաղերը, ինչպես նաև իր գրշամարտը «Անահիտ» ստորագրությամբ, գրաբարի և աշխարհաբարի հարցին շուրջ, ընդդեմ «Արամազդ»-ի (Բյուզանդ Քեչյան), և մանավանդ իր կրթանվեր երկարամյա գործունեությունը։

Հեղինակին անծանոթ մնացած է նաև Լուսինի-ի ինքնությունը. զայն հիշած է «Մուրճի» արտաքին աշխատակիցներու կարգին (Ա. 569)։ Այդ ծածկանունը գործածած է «Մուրճի» հրատարակիչ-խմբագիր Ավետիք Արտսխանյանց։

Շփոթություն է թույլ տրված Կահիրեի Աստվածաշունչ ամսաթերթին և անոր խմբագիր-հրատարակիչ Մառի Պեյլերյանի անձին շուրջ (Բ. 20)։ Հոս, որպես Մառի Պեյլերյանի կենսագրություն՝ մեզ ներկայացված են ծանոթություններ, որոնք բոլորովին տարբեր անձի՝ ֆրանսարնակ գրագիտուհի Մառի Ավաճյանի կվերաբերին։ Պեյլերյանի և Ավաճյանի անձերը այսպես շփոթելն և նույնացնելն հետո, հեղինակը չէ վարանած նույնիսկ «Արտեմիսն» ալ փոխանակ Կահիրեի՝ Փարիզի մեջ հրատարակված ցույց տալու...։ Արդ, հայտնի է, թե «Արտեմիս» լույս տեսած է Կահիրեի մեջ և ոչ Փարիզի, որուն հրատարակիչն է եղած Մառի Պեյլերյան։ Հիշյալը, իր պարբերականին դադարումեն հետո, ամուսնանալ՝ Ավո Նազշճյանի հետ անցած է Եվդոկիա՝ կրթական պաշտոնով և հոն զոհված 1915-ին։ Մինչ Մառի Ավաճյան երկար տարիներ ապրած և ստեղծագործած է Ֆրանսիայի մեջ, հոն ալ մահացած՝ 1910 դեկտեմբերին։ Ավելորդ է ըսել, թե ոչ մեկ կապ է ունեցած «Արտեմիս»-ի հետ։

Սահմանափակ են հեղինակի հաղորդած տեղեկությունները արևմտահայ գրական դեմքերու մասին։ Այդ բանը հաստատող փաստերից թվենք մեկ բանիներ։ Սուրեն Պարբևյանի կենսագրության մեջ (Բ. 87) կպակսին իր հեղինակություններեն «Քայքայում» և «Հայուհին» պատմվածքներու հատորները, «Զայն մը հրնչեց» թատերախաղը, իր խմբագրած եգիպտա-

հայ և գյուղանահայ տարեցույցերը և աշխատակցությունները թերթերուն։ Աբրամ Անտոնեանի (Բ. 325) գործերեն չեն հիշված՝ «Գանձարան» դասագրքերու շարքը, «Պատմություն Պալքանյան պատերազմին» ընդարձակ աշխատությունը, «Կավե արձաններ» երգիծական ուրվագծերը, ինչպես նաև իր գործածած բազմաթիվ ծածկանունները։ Օննիկ Զիֆրլի-Սարաֆի (Հովհ. Ասպետ, Բ. 328) գործերեն չեն հիշատակված «Միամիտի մը արկածները», «Թուրք թերթի օրերեն», «Տեր և տիկին Զպաի պեյ», ինչպես նաև իր բազմաթիվ թարգմանությունները օտար հեղինակներե, որոնցմե առանձին հատորով՝ Պոլ Բուրժեի «Փիլիսոփային աշկերտը», իր աշխատակցությունը բազմաթիվ թերթերու և պարբերականներու։

Նաեի անվանացանկը, որ կոչված է դյուրացնելու նյութերու համադրումի և մատուցումի աշխատանքները, գերծ չէ նույնպես շփոթեցումի փաստերե։ Պատահարար միայն նույն մականունը (ազգանունը) կրող բոլորովին տարբեր անձեր, այլևայլ ժամանակներու մեջ, նույնացված են և ներկայացված իբրև մեկ անձ։ Մինչ մյուս կողմե, ուրիշ մը՝ տարբեր ձևերու տակ հիշատակված է մեկեն ավելի անգամներ, որպես տարբեր անձ։ Օրինակ՝ առաջին հատորին մեջ Աբրահամ Հ. Այվազյան տրված է երեք տարբեր ձևերու տակ՝ Այվազյան Ա., Այվազյան Աբ. և Այվազյան Ա. Հ. և ներկայացված է որպես երեք տարբեր հեղինակներ։ Հակոբ Գուրգենը բաժնված է երկուքի՝ Գուրգեն Հ. և Գուրգենյան Հ. անուններու տակ։ Ենովք Արմենը վերածված է երեք տարբեր անձերու՝ Արմեն Են. և Ենովք Աբ.՝ առաջին հատորին մեջ և Ենովք Ա.՝ երկրորդ հատորին մեջ։ Հրանտ Ասատուրը եղած է Հրանտ Աս. և Ասատրյան Հ.։ Այս վերջին անվան հետ շփոթված է նաև «Բագմավեպ»-ի աշխատակից Հ. Հ. Ասատուրյանը, իսկ Հրանտ Ասատուրի վերագրված են նաև Հրանտ ծածկանունով գրություններ, որոնք պատկանած են անցյալ դարու հայանի գրողներ Սանփան Ոսկանի և Մկրտիչ Պեշիկթաշլյանի։ Թեոդիկ անվան տակ նույնացված են ինքը՝ Թեոդիկը (Լապճինճյան) և նրա կինը՝ գրագիտուհի Արշակուհի Թեոդիկը։ Ահարոն անունով միացված են Կարկաթայի «Շանմարան» թերթի (1821) աշխատակից Ահարոնն ու մեր ժամանակակից բանաստեղծ Ահարոն Տատուրյանը։

Երկրորդ հատորին մեջ Սիմանթոն բաժանված է երեք տարբեր մասերու՝ Նարճանյան Ա., Երբճանյան Ա. և Սիմանթու։ Թիրյարյան Միհրդատ տրված է Թիրյարյան Մ. և Թիրարյան Մ. Հ.։ Գերհարտ Հաուպտմանն եղած են Հաուպտման Գ. և Հաուպտման Հ. տարբեր հեղինակներ։ Հերիմյան Սրապիոնը տրված է զատ-զատ՝ Հերիմյան Ս. և Հերիմյան Սա.։ Որպես տարբեր անձեր ցանկված են նույնպես Ս. Ճնահիրն ու Ս. Ճնահիրճյանը, Պերպերյան Ռ., Պերպերյան Ռ. Հ և Ռ. Հ. Պ-ը (չիմանալ անոր Արա և Հրաչյա ծածկանուններու մասին), Ռշտունին և Ռշտունի Գ.-ը, Գառնիկ Ֆնտզյանը՝ որպես Ֆրնտզյան Գ., Ֆնտզյան Գ. և Գ. Փառնակ (ծածկանուն)։ Պարսամյան Մ. անվան տակ նույնացված են Պարսամյան Մերուժանն ու Պարսամյան Մկրտիչը։ Սարուխան և Սարուխանյան Ա. անուններով շփոթված են Առարկել Սարուխանյան բանաստեղծն ու Ալեքսանդր Սարուխան ծաղրանկարիչը։ Վ. Փափազյան ազգանվան տակ շփոթված են Վրթանես Փափազյան գրողը, Վահրամ Փափազյան գերասանը և Վահրամ Ս. Փափազյան մարզիկը։

Լեական մոտեցում ցուցաբերված է նաև հեղինակներու ստորագրությանց հանդեպ։ Անվան սկզբնատառեր (ինիցիալ) և ծածկանուններ բացահայտելու փորձեր բնավ չեն եղած։ Օրինակ. Ն սկզբնատառով միասնաբար խառն տրված են Երեմյան Հ. Սիմոնը («Բագմավեպ»), Երիցյան Ադերսանդրը («Արձագանք») և Տեմիրճիպաշյան Եղիան («Երկրագունդ» և «Տնտես»)։ Հ. Ա. սկզբնատառերով մեկտեղված են բազմաթիվ հեղինակներ՝ Համբ. Առաքելյանը (թթ. 4479, 4514, 4518 եվն.), Ա. Ս. Հակոբյանը (775), Հակոբ Ադաբարը (3899), Հովհ. Ավագյանը (8629, 9022), Հ. Ասատրյանը (12228), եվն.։ Ծածկանուններու մասին պիտի խուսափիմ մատանշումներե, որովհետև հարկ պիտի բլլար հարյուրավորներու հետ գործ ունենալ։ Մատենագիտական այսպիսի տարածուն աշխատության մը համար ծածկանուններու բացահայտումը լական պայման է։ Նաեի անվանացանկը լավագույն կերպով իր նպատակին ծառայած պիտի բլլար, եթե բոլոր այդ սկզբնատառերն ու ծածկանունները հնարավոր չափով բացահայտվելե հետո «տե՛ս» հղիչի միջոցով կենտրոնացվեին հոդվածագիրներու իսկական անվան դիմաց։ Նույն ձևով հարկավոր էր իրարու միացնել նաև Զմյուռնիան և Իզմիրը, Եվդոկիան և Թոքատ, Կ. Պոլիսն ու Ստամբուլը, Դիլիպեն ու Պլովդիվը, որոնք նաեի ցանկին մեջ երկու ձևին տակ այ հավասարապես հիշված բլլալով, տարբեր բաղադրներու տպավորություններ կրնան ձգել։

Սակայն ինչ որ ամենեն ավելի մեր ուշադրությունը կգրավե գրախոսվող աշխատության մեջ, այն ոչ լուրջ վերաբերմունքն է, զոր ցույց ված է առհասարակ հեղինակը՝ իր աշխատությունը գերծ պահելու համար խել մը արատ-

ոոց ապավաղումներն։ Պիտի տանք բանի մը օրինակներ միայն։ Թլկատինցին եղեր է տեղ մը Թլկարինցի (Ա հատ., թ. 4589), ուրիշ տեղ մը՝ Թլկաթիցին (Ա. 18376), բիչ անգին Թրլկատիցին (Ա. 18382), Ա. Պիպեռճյանը եղեր է Պիպերոնյան (18399), Ա. Զոպանյանը՝ Զուղլանյան (Ա. 18987) և Զոպանայն (Բ. 12477), Գյու դը Մոպասանը՝ Մոպասյան (Ա. 11189), Ցկատավ Միրբոն՝ Ակռավ Միրբո (Ա. 17166), իսկ եաեի անվանացանկին մեջ՝ Միրբաբա, Վիկտորիեն Սարդուն՝ Վիկտորիեն Սարդու (Ա. 18284), Սատատին՝ Սատատ (Ա. 19522 և 19581), Շահան Ջրպետը՝ Շ. Զրպետ (Ա. 19517), Ա. Շարլյանը՝ Շարիլյան (Բ. 12057), Հովսեփ Փուշմանը՝ Ֆուշման (Բ. 8051) Սյուրմեյանը՝ Սյուրմենյան (Բ. էջ 131) և Սյուրմելյան (Բ. 165), Լուիճի Փիրանեելլոն՝ Փիրանելլո (Բ. 11016), եղն.։ Բակուրանը (ծածկանուն Վահան Քյուրբճյանի) եղեր է Բակուրյան (512), Վարուժնակը (ծածկանուն Արիս Շարլյանի) եղեր է Վարուժան և Վարուժակ, Սուրխաթան (ծածկանուն Ավրամ Ակնտոնյանի) եղեր է Սուրխաթյան, եղն. եղն.։ Պան և իմաստի վերիվայրումներ. Բարիզյան նոթերևոր վերածվեր է Բարզյան նորերսի (Բ. 64), Նամակ Կարսիցը եղեր է Նամակ կայսրից (Ա. 10335), Նամակավերջի Քույր՝ Օտյան ստորագրությունը եղեր է Քուրդ Օտյան (Ա. 11521), Հոսավոտ նորահատներու-ն՝ նոր հատներու (Բ. էջ 316) և ...նորահարսներու (եաեի ցանկ, էջ 603) և այլն։

Կան նաև բազմաթիվ սխալներ նյութերու ներքևի ծանոթագրությանց մեջ, որոնք երբեմն կրնան բացասական արդյունք տալ։ Գրական մեկ ավելի սեռեր շփոթված են հաճախ, վեպեր ներկայացված են որպես պատմվածք, պատմվածքներ՝ որպես բերթված և այլն։ Պիտի բավականանանք երկու հատկանշական օրինակով միայն։ Ս. Թյությունճյանի (Շարասան) գրվածքը գերասան Գ. Ռշտունիի մասին, որ կենսագրական ակնարկ մըն է, ներկայացված է որպես բանաստեղծություն (Բ. 2749)։ Որպես բանաստեղծություն ծանոթագրված է նաև Ռ. Սեակի բժշկական կյանքն պատմվածքը «Տեղիրիում Թրեմենս»-ը (Բ. 9790)։

Գործը զերծ չէ նաև լեզվական, բերականական և թարգմանական սխալներե։ Գրաբար չատ մը բառեր և բացատրություններ տրված են աղավաղված վիճակի մեջ։ Գրաբարաձև «մասամբ իւիր»-ը սխալ ընթերցմամբ վերածվեր է «մասամբ յուիր»-ի (Ա. 485)։ «Տէր կեցո զու զՀայս»-ը եղեր է «Տեր կիցդ զհայս» (10976), և այսպես ուրիշներ։ Թարգմանություններու մեջ ավելի որոշ կերպով կշեշավի հմտության պակասը։ Խոսելով «Գութան» թերթի մասին (Բ. 15), կհիշե հարակից ծանոթություններեն ...«հովանավորությամբ պ. Է. Տյուբլոյի անօրեն Լնսդյուդիվ Բասթեորի և անդամ Լնսդյուդիվ տր Ֆրանսի»։ Ընթերցողները կտահեցին արդեն, կհուսամ, թե հոս կրկնված Լնսդյուդիվ բառը ուրիշ բան չէ, եթե ոչ հեղինակին սխալ մեկ ընթերցումը (հետևաբար և իմաստին չթափանցելը) ֆրանսերեն Լնսդիդյու (Institut) բառին։ Ուրիշ օրինակ մը։ «Ռազմիկ», լրագիր... Ֆիլիպե (Բ. 56)։ Տակի ռուսերեն թարգմանության մեջ Ֆիլիանե եղած է... Филлипины։ Արդյոք Բուլղարիո Ֆիլիպե (ներկայիս Պլովդիվ) բաղաքը Ֆիլիպինյան կղզիներու հետ կշփոթե հեղինակը։

Կկարծեմ թե անտեղի պիտի չըլլար ճշգրիտ սահմանավորումը ունենալ «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» դպրոցարին, ի մասնավորի ճշտել, թե որոնք պետք է տեղ գտնեն այնտեղ և որոնք ոչ։ Գրախոսվող աշխատության մեջ, հայերենները կողքին, հիշատակված են նաև հայերու մասին օտար լեզուներով հրատարակված պարբերականներ, հայատառ թուրքերեն թերթեր և խմբագրություններ։ Անոնց ներկայությունը թերես կարելի բլլար անպատեհ չնկատել հայերեն պարբերական մամուլին նվիրված այս հրատարակության մեջ, սակայն, ինձ կթվի թե ավելի պատշաճ և նպատակահարմար պիտի բլլար, եթե գործին վերջավորությանը,— բուն մայր ցուցակեն դուրս և անջատ անկե,— ուրույն բաժիններու մեջ դասավորվեին անոնք, անհրաժեշտ գտումներն ընելե հետո։ Ոչ գանցառելի թիվ մը կներկայացնեն արդարև օտար լեզվով հրատարակություններեն այնպիսիները, որոնք անմիջական ոեվ աղերս չունենալով հայագիտության կամ հայ անունին հետ, պարզ թյուրիմացության մը կպարտին իրենց մուտքը հայ պարբերական մամուլին նվիրված այս աշխատության մեջ։ Որպես այդպիսիներ կթեկադրենք դուրս ձգել հետևյալները.

Orient (Բ. էջ 8), Orientalische Bibliographie (Բ. 8), Orientalische Archiw (Բ. 8), Oeuvres de Ecoles d'Orient (Բ. 8), Litteraturblatt fur Orientalische Philologie (Բ. 7), Orientalische Litteraturzeitung (Բ. 8), Osterreichische Monatschrift fur den Orient (Բ. 8), L'Orient illustre (Բ. 334), The Near East (Բ. 358), L'Information de l'Orient (Բ. 380), Der Orient (Բ. 436), Ephimerides Orientales (Բ. 436), Wiener Zeitschrift.

Նույն ձևով, աշխատության մեջ սպրդած են նաև մեկ բանի խմբագիր և ձեռագիր թերթեր, որոնք ընդհանրապես որպես տպագիր-

ներ մուծված են հոն։ Այդպիսիներեն են.— «Բանբեր պարտիզակյան» (Ա հատ., 136), «Երախայրիք», Եվդոկիա, խմբ. Գ. Փասպանյան—ոչ Փոսպանյան—(Ա. 461), «Բույր», Կ. Պոլիս (Ա. 615), «Ի զեն», Անապա (Բ. 39), «Տիգրիս», Կեսարիա (Բ. 115), «Ասուպ», Վան (Բ. 119), «Կայծեր», Ռոտոսդո (Բ. 131), «Մեղու», Պարտիզակ (Բ. 246), «Նոր սերունդ», Կեսարիա (Բ. 249), «Դարբնոց», Եվդոկիա (Բ. 270), «Փարոս», Թիֆլիս (Բ. 313). «Հորհրդային Հայաստան», Բուենոս-Այրես (Բ. 331), «Արարատ», Ճորճթաուն (Բ. 113), «Զարթոնք», Կահիրե (Բ. 471) «Ջահակիր», Դիդրոյա (Բ. 548), «Ջամ-թաղ», Երուսաղեմ (Բ. 550)։

Քանի մը խոսք ալ մեր պարբերականներու թիվի մասին։

Հանգուցյալ բանասեր Դ. Լևոնյան իր «Հայոց պարբերական մամուլը (1794—1934)» աշխատության մեջ հայ պարբերականներու թիվը մինչև 1607-ի հասցուցած էր (1586-ը հայերեն և 21-ը հայատառ-թուրքերեն)։ Ասոնց վրա աւելին բննադատություններ բերավ 100 հատի չափ նոր լրացումներ (Հ. Ն. Ակինյանի և այս տողերը գրողին կողմե), որով գրախոսվող աշխատության հեղինակը կանխավ ուներ արդեն 1700 անուն պարբերականներու պատրաստ ցուցակ մը իր առջև։ Արդ, բնական է. կսպասվեր, որ այդ թիվը զգալի հավելում մը կրած ըլլար այս աշխատության մեջ։ Յավով պետք է հայտնել թե հուսախաբ եղած ենք մեր ակնկալություններուն մեջ։ Ընդամենը հազիվ 1836 պարբերական հրատարակություններ հիշատակված են հոն, թիվ մը, որ չափազանց անբավարար է ու կմատնե որոնումի և ճիգի պակաս։ Այս եզրակացության կուգանք, ի նկատի առնելով այն պարագան, որ 1934-են ասդին լույս տեսած միայն սովետահայ պարբերական հրատարակություններու թիվը 106-ը կանցնի։ Ուրեմն, հարց կծագի, միա՞յն 30 նոր հրատարակություններ կան ավելցվելիք. 1934—1956 տարիներու շրջանին համար և այդ ...տարիներու աշխատանքն մը հետու։ Հարգո հեղինակը փորձելով տալ մոտավոր թիվը բովանդակ հայ պարբերական մամուլին, իր ներկայացուցած 1836 անուններուն վրա կթելադրե ավելցնել 64 հատ խմորատիպներ և 100 հատի չափ ալ ցարդ անհայտ մնացած ուրիշ տպագիր հրատարակություններ, որով, կեղրակացնե ...«հայ պարբերականների թիվը կարող է հասնել ընդամենը 2000-ի» (Բ հատ., Առաջաբան, էջ IX)։

Այս թիվը, առաջին իսկ ակնարկով, անշուշտ շատ հեռի է մեր մամուլի մոտավոր պատկերը ներկայացնելե։ Քիչ անդին առիթ պիտի ունենանք տեսնելու, թե որքան քիչ է անհայտ տպագիրներու համար նախատեսված 100 թիվը։ Նույնքան ընդունելի չէ նաև ենթադրական 64 թիվը խմորատիպներու համար։ Ասոնց թիվը, առանց պատի թերթերու, անվարանորեն կրնանք բանի մը հարյուրներու հասցրնել, առանց մեծ ճիգերու։

